

2467

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ

1812 թվին

ՄՈՍԿՎԱՆ ԻՆՉՈՒ ԱՅՐՎԵՑ

9 (47)

9-88

ՈՒՍՈՒՑԻՋՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

3(47)
2-88

2011-07

Հ. Խ. Ս. Հ. ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 13

Հ Ե Ռ Ա Կ Ա Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

№ 13

24 JAN 2006
R.A.

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՅԵՎ

38284

1812 Թ. ՄՈՍԿՎԱՆ ԻՆՁՈՒ ԸՅԻՎԵՑ

(Ոժանդակ նյութեր հեռակայություններին)

Թ ա ր ք մ. Շ Ս Մ Լ Յ Ա Ն

Խմբագիր՝ Հ. ԽՈՒՇՈՅԱՆ
Սրբագրիչ՝ ԳՍՐ. ՀԱՅՈՐՑԱՆ



3249-84

Գլավիտ № 2240 հրատ. № 13 պատվ. № 3 տիրած 1000

Հանձնված և արտադրության 25 դեկտեմբերի 1936 թ.
Ստորագրված և տպելու 4 հունվարի 1937 թ

Ուսուցիչների վերակազմման ինստիտուտի տպարան,
Յերեան, Մարքսի փողոց 17

1.

Մոսկվայում պահպանվել են մի քանի հուշարձաններ, այսպես կոչված՝ «1812 թվականի հայրենական պատերազմից»:

Կրեմլում, աչքի ընկնող տեղում, մոնումենտալ դինարանի կողքին դրված էյին թշնամու թնդանոթների յերկար շարքերը, վորոնք ուսաների կողմից հետ էյին խլված կամ հավաքված: Ի հիշատակ Նապոլեոնի դեմ տարած հաղթության, Տվերսկայա ուղեփակի մոտ կանդնեցված էր հաղթական դարպաս, իսկ այն վայրում, վորտեղ այժմ խորհուրդների պալատն է նախագրծվում—Մոսկվայի ուղղափառ տաճարներից ամենալայնածավալը՝ խրամ Խրիստա-սպասխույյա: Դարագամիլովսկայա ուղեփակի մյուս կողմում պահպանվել է վերակառուցված «Կուսուղովյան» խրճիթը, վորտեղ 1812 թվականի սեպտեմբերի 1-ին ռադմական խորհրդի պատմական նիստն էր տեղի ունեցել, վորից հետո Մոսկվան առանց կովի հանձնվեց ֆրանսիացիներին:

Մատնանշված հուշարձաններն էյապես վերաբերում էյին վողջ Ռուսաստանի պետական անկախության համար մղված կովի պատմությանը, սակայն այդ դաժան պայքարում վճռական դերը Մոսկվային վիճակվեց: Նապոլեոնը վարում էր համարյա թե կես միլիոն մարդկանցից բաղկացած իր հրաշալի բանակը, ուղղություն ընտրելով հատկապես դեպի Մոսկվա. և այստեղ ել՝ Մոսկվայում նսեմացավ նրա, վորպես մեծ գորավարի, փառքը:

Արշավախումբ պատրաստելով դեպի Ռուսաստան՝ Նապոլեոնը հավատացած էր փայլուն հաջողության նկատմամբ, վորը համարյա թե մեկ ու կես տասնյակ տարիների տեվողության ընթացքում յերբեք չէր լքել նրան: Նա արշավում էր դեպի Ռուսաստան «ազատարարի» դիմակի տակ, սակայն դյուղացիությունը, վոր սկզբում ակնկալում էր, թե պատերազմը փրկու-

թյուն կրեք իրեն ճորտատիրական իրավունքներից, շատ շուտով համոզվեց, զոր Նապոլեոնը բերում է միայն նոր ստրկացում և ոտարեկրոյա լուծ: Այդ ժամանակ գլուղացիությունը դուրս յեկավ Փրանսիական զորքերի դեմ, նա գլխավորում էր նրան տեղերով, յեղաններով ու կացիններով, հրկիզում էր իր հացահատիկի և ձիերի համար պատրաստած կերի պաշարները: Հրդեհները հետևում էյին նահանջող ուսական բանակին և չափազանց մոզմունում էյին թշնամու մոտենալը: «Հենց Սմոլենսկուց սկսած՝ յես հանդիպում էյի միայն մոխրի», — հայտարարում էր հետագայում Նապոլեոնն իրեն հատուկ չափազանցելու սովորական յեղանակով:

Հոգնեցնող չվերթերից հետո հասնելով Մոսկվա և այն գրավելով՝ Նապոլեոնը հուսով էր այդտեղ գտնել հնազանդ ժողովուրդ, զորքի համար արժանավայել հանդիսա, պարենի մեծ պաշարներ ու պատշաճ բնակարաններ: Սակայն Մոսկվան ել նրա հույսերը չարդարացրեց — նրան բաժին ընկավ բոցավառվող Մոսկվան առանց մոսկվացիների: Իր ժամանակի ամենաճարտար գորավարն իրեն զգաց վորպես ծուղակի մեջ ընկած, հեռավոր Ֆրանսիայից կտրված ու շրջապատված թշնամական ուժերի ամուր ողակով: Անպատեխությունից Նապոլեոնը մինչև անգամ անմիջապես չըմբռնեց իր ճակատադրական անհաջողությունը և անգործ մնալով՝ գրեթե անմարդարնակ Մոսկվայում մեկ ամսից ավելի հապաղեց:

Սեպտեմբերի 2-ին Նապոլեոնի գորքը ներս մտավ ուսական մայրաքաղաքը, հոկտեմբերի 7-ին նա կիսատանջանոր կերպարանքով հեռացավ Մոսկվայից:

Մոսկվայի հրդեհի մեղավորներն անվանվում էյին զանազան կերպ: Նապոլեոնի համախոհները հրկիզման գործում մեղադրում էյին ուսաներին, համարելով այդ հրկիզումը բարբարոս ասիացիների ճիվաղային վարմունք: Իսկ անդլիացիք ու գերմանացիք պատրաստ էյին Մոսկվացիների վեհությունը դավաբանել, վորոնք ընդհանուր գործի համար զոհաբերեցին սեփական քաղաքը: Մոսկվայի գլխավոր հրամանատար կոմս Ռաստուպչինը, վորին վերագրում էյին հրկիզման կազմակերպումը, ոտարեկրոյացիների աչքում բարձրացավ վորպես հերոս, սպազրվում և տարածվում էյին նրա պորտրետները, նրան մեծաբանքով էյին վողջանում: Բեռլինում՝ Լիվերպուլում մինչև անգամ նրա անունով մեկ փողոց կոչեցին, չվեղական թագավորը նրան

պատվի շքանշան ուղարկեց, և այլն: Ժամանակի ընթացքում ուսական հասարակության աչքում Մոսկվայի հրդեհն սկսեց վող թե վիթխարի դժբախտություն թվալ, այլ հենց իրենց՝ քաղաքացիների նշանավոր սխրագործություն, վորոնք իրենց ստացվածքը կրակի մատնեցին հանուն Ռուսաստանի փրկության: «Մոսկվայի հրդեհը — այդ հերոսական մի արարք էր, այդ վսեմ մի վորոշում էր՝ առաջացված ամենաբոցավառ անձնագրոհությամբ և հայրենասիրությամբ»*):

Բնության առնենք, թե իրականում ինչպես տեղի ունեցավ 1812 թվականի ավերիչ հրդեհը, վոր գրեթե ամբողջ Մոսկվան մոխիր դարձրեց:

2

Մի քանի դար տեղ իր գոյության ընթացքում Մոսկվան շատ անգամ և աղբիլ ամենասպառնիկ «հրդեհային ավերմունք»: Մոսկվայի պատմության մեջ պատահել են այնպիսի հրդեհներ, վոր թվացել և, թե քաղաքը կործանման յեղրին և գտնվում, և նույնիսկ յերկմտություն և առաջացել թե կարող և արդյոք նա վերստին վերակենդանանալ: Սակայն 1812 թվականի հրդեհն իր ուժեղության ու յերկարատևության չափով (այն տեղից գրեթե 5 ու գիշեր) քիչ մնաց, վոր գերազանցեր իրեն նախորդող բոլոր տեղի ունեցածները: Մոսկվայում հրդեհից առաջ հաշվվում էր ընդհամենը 9151 տուն, նրանցից 6584 տուն փայտե և 2567-ն ել՝ քարե: Այդ թվից, Ռաստուպչինի պաշտոնական տվյալների համաձայն, վոչնչացել կամ խիստ վնասվել էյին 7632 տուն, այսինքն՝ 83 տոկոսը: Մասնավոր անձանց ու գանձարանի նյութական կորուստները հսկայական էյին:

Հրդեհը ծագեց հենց միևնույն ողջ, յերբ Նապոլեոնը Դաբաղամերովի կողմից մերձենում էր Մոսկվային: Բոցը յերևաց միաժամանակ քաղաքի տարբեր մասերում: Այրվող շենքերից առաջինն էյին՝ զեղապրանքի վաճառքաշարքերը, Կոթմիր հրապարակի վրա գտնված Դաստինիյ շարքը և

*) «Կոմս Լանսբերոնի նոթերը», «Ռուսակի աբիլի» ժուրնալ, 1895 թ. գիրք 3-րդ, էջ 150

Կառնետնի շարքը (Պետրովկայի մյուս կողմում) իր մեծաքանակ
կառքերով հանդերձ: Մեկտեմբերի 3-ին առավոտյան հսկայա-
կան Գաստրինի զվորը (Վարվաուկայի և Իլյինկայի միջև) բոցա-
վառվում էր ինչպես մի հսկայական վառարան, վորի միջից
դուրս էլին ժայթքում ծխի թանձր քուլաներ ու բոցի լեզուներ:
Հաջորդ առավոտ այրվեց սկսվեց մի քանի կետերում Զամոսկ-
վորենչին, բոցավառվեցին Մոսկվա գետի ափին գտնված հացա-
հատիկի պետական շտեմարանները և հրետանային արկերի զի-
նապահատը: Այս զարհուրելի ուրը (սեպտեմբերի 4-ը) քաղաքը
նմանում էր մոլեգնող հրեղեն ծովի: Սարույին այնքան մեծ
էր, վոր հրացուքը պարզորեն դանազանվում էր Վենեվկյում,
այսինքն՝ ավելի քան 100 կիլոմետրից:

Հրդեհի բազմաթիվ փայլուն նկարագրություններից մեջ
կրեներն էր ֆրանսիացու հիշողությունները, վորը մի քանի
տարի ապրել էր Մոսկվայում և քաղաքին լավ ծանոթ էր «...հո-
ւնքաբլթի ուրը (սեպտեմբերի 4-ին) առավոտյան ժամի իննի
մոտերքն ահավոր զորություն հյուսիսային ուրազան բարձրա-
ցավ: Ահա թե յերը սկսվեց մեծ հրդեհ: Իմ պատուհաններից
տեսանելի յեր, թե ինչպես, նախ՝ կրակը բռնկվեց գետի մյուս
կողմում, կոմսարիատի հետը (Սադովնիկներում), և ապա
սկսեց տարածվել քամու ուղղությամբ. մեկ ժամվա ընթացքում
կրակը ցրվեց տասը տարբեր վայրեր, այնպես, վոր Զամոսկվո-
րենչինի կառուցված ահագին տարածությունն ամբողջովին բո-
ցերի ծովի յեր վերածվել, վորի ալիքները մոլեգնում էին ողի
մեջ՝ ամենուրեք տարածելով ամայացում և զարհուրանք: Միա-
ժամանակ հրդեհը կրկին բռնկվեց Կիտայ-գորոդում ել ավելի մեծ
ուժով, քան թե առաջին օրերում: Հատկապես վորտեղ՝ կրակ-
ներ կային, կրակն իրեն համար գտավ լիառատ սնունդ՝ հան-
ձինս ապրանքների, վորոնք պահված էին այնտեղ: Այդ հան-
գամանքը, ինչպես նաև սաստիկ փոթորիկը, տարածություն նեղ-
վածությունը և քաղաքի այրվող կետերի շտապությունն անհա-
րին էին դարձնում ամեն մի հակազդեցությունը կրակին,
այնպես վոր դժբախտ տնտեսատերերը շտապում էին իրենց
հետ վերցնել միայն ամենատրեքավոր իրերն ու փախչել:
Սկսվեց կողոպուտը, և այն ամենը, ինչ վոր անվառ էր մնացել բո-
ցերից, զինվորների ձեռքն ընկավ: Մինչ հրդեհը մոխիր երգարձ-
նում Կիտայ-գորոդը, Մոսկվայի մնացած մասերը նույնպես բո-
ցավառվեցին: Պրեչիստենկան, Արբատը, այնուհետև պատնեղի

ուղղությամբ (Սադովայայի) Կրասնիյի վարոտայի միջով ու վո-
րոնցովոյի դաշտով մինչև իսկ բուն Յաուլա, Յաուլայի այն
կողմը բոլորը բոցերի մեջ էլին: Քաղաքի վրա ողի ամ-
բողջ շերտը վեր էր ածվել բոցեղեն զանգվածի, վորը ժայթ-
քում էր հրավառ խանձողներ, իսկ ջերմությունից ողի ընդար-
ձակման հետևանքով մերրիկն ել ավելի յեր սաստկանում. յերբեք
յերկինքն իր ցամառն միջոցին դրանից ավելի զարհուրելի տե-
սարան չեր ցույց տվել մարդկանց*):

Ինքը՝ Նապոլեոնը, վոր մտադրվել էր Կրեմլի ցարական պա-
լատում կենտրոն, յերկյուղ կրելով շարունակ ծավալվող հրդե-
հից, հարկադրված էր Կրեմլից հեռանալ. անցնելով կողմնակի
նրբափողոցներով, Մոսկվա գետի ափով, կյանքը վտանգի յին-
թարկելով՝ քաղաքից դուրս յեկավ ու իջևանեց Պետրովսկի ապա-
րանքում (այժմ ողային նավատորմի Սկադելիան է, Տվեր-
սկայա ուղեփակի մյուս կողմում): Այնտեղ նա սկսեց մնալ՝
սպասելով, թե յերը կհանդարտի բոցեղեն տարրերը: Սեպտեմ-
բերի 8-ին, ուժգին տեղատարափից հետո, վորը հանգցրեց հըր-
դեհը, նա Կրեմլ վերադարձավ:

Հրդեհից հետո Մոսկվան զարհուրելի տեսարան էր ներկա-
յացնում. ամենուրեք այրված ահագին ամայի տարածություններ,
վորոնց մեջ հազվեհաղ կարելի էր նախկին փողոցների ուղղու-
թյունը տարբերել: Տեղ-տեղ անվառ մնացած շենքեր էլին նըշ-
մարվում: Յուրաքանչյուր քայլափոխում հանդիպում էին ծխա-
ցող ավերակների կույտեր, վհատորեն դուրս էլին պրծել վառա-
րանների ծխնելույթներ, պատերի և սյուների մնացորդներ: Փո-
ղոցներով դժվար էր անցնել՝ վայտի, յերկաթի և այլնի ցանու-
ցիր յեղած կառուտանքի պատճառով. հենց այստեղ էլ թափթի-
ված էր ամեն տեսակի կահկարասիք և տնային իրեղեն, վոր
բնակարաններից դուրս էլին շարտել, կամ թե թողել էին կո-
ղապտիչները, վորոնք հափշտակում էին այն ամենը, ինչ վոր
ընկնում էր ձեռքները, ապա շարտում էին, հանկարծ ավելի ար-
ժենքավոր կողոպուտ տեսնելով:

Նապոլեոնը Մոսկվայից հահանջելիս կարգադրեց Կրեմլի
շենքերի, պարիսպների և աշտարակների տակ ապաններ անց-
կացնել ու պայթեցնել Կրեմլը: Հոկտեմբերի 11-ին վերջին զորա-

*) «1812 թ. հայրենական պատերազմը և ուսու հատարությունը»,
հատոր 4-րդ, էջ 142, հոդված Ի. Մ. Կատայովի, № 1912

մասերի հեռանալուն հետևեցին վառողային պայթյուններ: Նապոլեոնի ղեկավարութիւնը լիովին չկրաւորեց: Ինչ վոր պատճառներով պայթյունները միայն մասնակի ֆատամքներ և վոչ թե ընդհանուր ավերածութիւն պատճառեցին: Խիստ ֆատակցին յերկու աշտարակ՝ հարավ-արեւմտյան կլոր աշտարակը, վոր ուղղված է դեպի Կամեննի կամուրջը և Նիկոլայայան. փչացված էին նաև ապարանքի մի մասը, զինարանը, այսպես կոչված՝ Գրանովիտայա պալատը, Բարովիցկիյի վարոտան, Իվան մեծի կառուցած շէնքերը. տեղ-տեղ քանդվել էր Կրեմլի պարիսպը: Յենթադրում են, վոր այս անգամն էլ փրկեց ուժգին անձրևը:

3

Մոսկվայի հրդեհն սկսվեց թշնամու կողմից Մոսկվան զբաղաման յենթարկելու հետ միաժամանակ. Կրեմլը պայթեցնելու փորձը նրա Մոսկվայից դուրս գալու որվանն էր հարմարեցված: Այդ հիման վրա էլ հանգչում էր բուն մոսկվայի աշնավականների հաստատակամ համոզմունքը, թե թշնամին, վոր հանդըհնեց Կրեմլը կործանել, հրկիզեց նաև ամբողջ Մոսկվան:

Իրենք՝ աշնավականները յերբեք էլ իրենց տներն ու իրենց հարստութիւնն այրման չեյին դատապարտել: Նապոլեոնի ժամանելու նախորդակին նրանք մեկնեցին իրենց հեռավոր կալվածքները՝ Մոսկվայից դեպի արեւելք ու դեպի հարավ, կամ թե պատսպարան էյին վորոնում գալառական քաղաքներում՝ իրենց ազգականների մոտ, վորտեղ նրանց անմիջական վտանգ չեր ըսպառնում (Նիժնի, Պենզա, Տամբով, Սիմբերսկ, Կազան և ուրիշներ): Նրանք իրենց՝ Մոսկվայի տներից իրեր չեյին դուրս հանում, հույս ունենալով շուտով վերադառնալու, իսկ նրանց պահպանութիւն համար հաճախ թողնում էյին իրենց զարպատի մարդկանցից վորեւ մեկին: Յերբ գլուզերում ու քաղաքներում նստած ժամանակ նրանք տեղեկանում էյին Մոսկվայի հրդեհի մասին, ապա, բնականաբար, ֆրանսիացիները կողմից կատարած հրկիզումով էյին պարզաբանում այդ վրդովվելով ու դայրանալով հրեշ Բոնապարտի նոր չարադործութիւն վրա: Աշնավականներն այն ժամանակ ամենին չեյին յենթադրում, իրր թե այդ

հենց իրենք էյին զոհաբերում իրենց գույքը հայրենիքի դոհասեղանին, ինչպես այդ սկսեցին հետադաշում նրանց վերադրել:

Մենք այստեղ ամենից առաջ աշնավականների մասին ենք խոսում, քանի վոր հարկավոր է մտաբերել, վոր այն ժամանակ Մոսկվան յեղել է առավելապես համառոտական աշնավականութիւն մայրաքաղաքը: Նրան էր պատկանում Մոսկվայի տների նշանակալի մասը. նա իր ճորտատիրական բազմաքանակ սպասավորները հետ միասին կազմում էր Մոսկվայի բնակիչների զգալի մասը:

Մոսկվայի հոգեվորականութիւն աչքում, վորը հեռացել էր Մոսկվայից, հրդեհի անտարակուսելի հանցավորները յեղել են ֆրանսիացիները, գերմանացիները, լեհերը և ուրիշ այլադավաններ, վորոնք Նապոլեոնի բանակի մեջ էյին մտնում:

Առեւտրական-տնտեսները, կրպակները և ապրանքապահեստների սեփականատերերը նմանապես հրդեհի զարհուրանքները վերադրում էյին Մոսկվան գրավող անգլոթ թշնամու գործողութիւններին: Այդ նույն կարծիքին էյին նաև հրդեհից տուժած զանազան չինովնիկները:

Տնտեսների ու շարժական գույքի սեփականատերերի այս բոլոր կատեգորիաները, բոլոր այդ ցենզավոր մոսկվացիները չեյին կասկածում, վոր հանցավոր հրդեհները հանդիսանում են ֆրանսիացիները:

Միևնույնը հաստատում էր նաև բարձրագույն կառավարութիւնը: Նոյեմբերին իմպերատոր Ալեքսանդրը հրամանագիր արձակեց՝ Մոսկվայում Նապոլեոնի թնդանութիւններից դափնիներով պսակված մի աշտարակ կանգնեցնելու մասին: Այդ հրովարտակում Ալեքսանդր առաջինը մատնանշում է, վոր Նապոլեոնն իրեն թույլ է տվել «պատերազմի համար անվայել ու խայտառակ հրկիզումներ», «անարդ հրկիզողների ամոթալի և զիշատիչ գործեր»:

Այդպես էյին «բարձրագույնորեն» դրոշմում հրդեհի հանցավորներին:

1812 թվականին հրկիզումը համարվում էր վորպես թշնամական խայտառակ ու ամոթալի արարք: Յեւ միայն հետո ուռս հայրենասիրներին սկսեց փաղաքշական թվալ, ըստ Լ. Ն. Տոլստոյի խոսքերի՝ «Իր ժողովրդի ձեռքը հերոսական ջահ դնելը»*):

*) «Պատերազմ և խաղաղութիւն», հատոր Յ-րդ, մաս Յ-րդ, դրուխ 26:

Յերբ շուտով, Նապոլեոնի մեկնումից հետո, կառավարութունը հրդեհից տուժած մարդկանց պետական գրամական փոխառությունները բաշխելու նպատակով կոմիտե կազմեց, և յերբ դեպի այդ կոմիտեն տուժած մոսկվացիներից իրար հետևից խնդրագրեր թափվեցին, ապա այդ վերջինները բոլորովին ցույց չեկին ապրիս իրենց մասնակցությունը քաղաքի ընդհանուր հրդեհման, կամ թե իրենց տունը վառելուն:

Ընդհակառակը, նրանց խնդրագրերի մեջ մենք հանդիպում ենք վորոշակի շատ հայտարարություններին, թե նրանց տները, դժբախտաբար, թշնամու կողմից են վառված: Որինակի համար, մեկը գանդառվում է, թե նրա տանը «ընդհանրական չարագործի ձեռքն և վրա հասել և հրի ձարակ դարձրել», մյուսը խնդրում է ֆլատներին հատուցման մասին՝ կրած «վայրագ թշնամու բարբաբոսական ձեռքերից», յերրորդը հիմնավորում է իր խնդիրը նրանով, թե իր տունը բնաջինջ և արված «այստեղի՝ մայրաքաղաքի վրա հարձակված թշնամու զորքերի կողմից կատարած հրդեհից»^{*)}: Համանման վճռական պնդումները քիչ չեն: Այստեղ ակնարկություն անգամ չկա հայրենասիրական նկատառումներով իրենց տներին կամ նրանց հանձնարարությունները տներում մնացած դարպասի մարդկանց կողմից կատարված գիտակցական հրկիզման մասին:

Հայրենասիրական գոհարերությունները թագցնելը հիմունքներ չունեն: Յեթե այդպիսի անձնադուրբության դեպքեր լինեյին, ապա այն ժամանակ նրանք կարողանային հենց իրենց՝ հրդեհից տուժածների հայցերի պատճառարանություն մեջ, մինչդեռ վերջիններս ամբողջ հանցանքը ֆրանսիացիների վրա ելին բարդում:

Կարելի չե հնարավոր համարել, վոր Մոսկվայում մնացած ուսմ մարդկանցից վոմանք այսպիսի թե այնպիս մասնակից գտնվեցին հրդեհին թեկուզ այն մտքով, վոր չեյին հանդցնում սկսված հրդեհը:

Միաժամանակ մենք չենք խոսում Մոսկվայում ձգված մարդկանց մասին, — հիվանդ, վերավոր և գաղափար, այդ դժբախտներին, անշուշտ, պետք է հաշվից հանել վորպես անընդունակ թե հրկիզելու և թե հրդեհը հանդցնելու: Այնուամենայնիվ

^{*)} Պ. Շչուկին «1812 թ. հայրենասիրական պատերազմին վերաբերող վավերագրեր», մաս 2-րդ, էջ 134 և 150, № 1908:

նայնիվ ընդունենք, վոր հրկիզումներ կազմակերպելու կամ թե հրդեհները չարդեհելու գործին մասնակցում եյին անտուն մարդիկ, որինակ, բանտարկյալները, վորոնց քաղաքի հանձման նախորդակին բաց եյին թողել կալանքի վայրերից, կամ թե դարպասի այն մարդիկ, վորոնց նրանց տները Մոսկվայից չեյին վերցրել իրենց հետ:

Յեթե մինչևիսկ այդ յենթադրությունն արդարացի համարվի, ապա մնալոված տնտեսները բնավ ել տրամադրված չեյին յեղել այդ հրձիգների հետ միանալ ու ձուլվել: Ավելի շուտ նրանք պատրաստ եյին նրանց համարել ֆրանսիացիներին ոժանդակողներ, դավաճաններ:

4.

Բայց յեթե 1812 թվականին ուսները վատհարար առում եյին, — «ֆրանսիացիներն այրեցին մեր Մոսկվան», ապա ֆրանսիացիներն ել, իրենց հերթին, նույն բանում մեղադրում եյին մոսկվացիներին: Ֆրանսիացիք վորոնում եյին ուս հրձիգներին, բռնում եյին նրանց, դատում եյին ռազմական դատարանով ու գնդակահարում:

Տալտոյի «Պատերազմ և խաղաղություն» գրքի մեջ կա հրձիգների նկատմամբ կատարված՝ սարսափ ազդող պատժի գեղարվեստական նկարագրությունը, վորոնց թվի մեջ քիչ եր մնում, վոր ընկներ տալտոյան եպոպեյայի հերոս Պյեր Բեզուխովը, վոր հրկիզման մասին յերբեք չեք ել մտածել:

Վոչ իրեն՝ Նապոլեոնին, վոչ նրա գեներալներին ու զինվորներին վոչ մի իմաստ չունեն Մոսկվայում, նրա գրավումից հետո, հրկիզումներ կատարել. նրանք հույս ունեյին Մոսկվայում հանգստանալու, նրանց պետք չեք քաղաքն ամայացնել, դեպի վորը նրանք ձգտում եյին, և վորը, չնայած նրա բնակիչների վախուստին և մատամբ ել դրա հետևանքով, իրենից ներկայացնում եր նախանձելի ավար: Ֆրանսիական հրամանատարություն համար միանգամայն պարզ եր, վոր Մոսկվայի հրկիզումները ֆրանսիական զինվորներից չեյին ծագում: Ուժ չունենալով սաստկացող հրդեհները հաղթահարել, հրամանատարություն իր ջանքերն ուղղեց առանձին հրձիգների կալանավորման, վորպեսզի հրձիգությունների հանգամանքները կարողանա լուսաբանել ու ապացուցել իր անմասնությունը նրանցում:

Ինչպէս բացատրել պայմաններում գործող ամեն մի ռազմական դատարան, Ֆրանսիական դատարանը մոսկովացիներին նկատմամբ ի վիճակի չէր ամբաստանյալներին համար ամենապարզապէս հակառակդական սխալներէն խուսափել: Այնուամենայնիւ այս դատարանը համաձայն վերոյ փաստական նշանք, վերը մերկացնում էր ռուսներէն յիշուած իրական մասնակցութեանը հրկիզումներէ գործում: Յետեւ տեսնուող ավելացնենք Ֆրանսիացիներին՝ հրդեհի ակնատեսներին ավելի ուշ որոշման միտման վկայութեանները, ապա հարկ եւ լինում խոստովանել, վոր Ֆրանսիացիներին զեմ ուղղված ինչ վոր մեկի ձեռքն ուժանդակում էր Մոսկովայի հրդեհների կազմակերպմանը եւ կոչվել նրանց զեմ կանխում էր: Մակայն այդ ուժը, վոր ներգործում էր Ֆրանսիացիներին հանդէպ միաժամանակ ամենեւին համաձայնութեան մեջ չէր Մոսկովայի բնակչութեան հետ, վորն իր բարեկեցութեանը կորցնում էր կրակի մեջ, այլ, ընդհակառակը, գործում էր նրանից զազանի եւ առանց նրա գիտութեան:

Այդ ուժի ներքո մենք հասկանում ենք կոմս Ֆ. Վ. Ռաստոպչինին, Մոսկովայի գլխավոր հրամանատարին: Նապոլեոնին—Ֆրանսիական հեղափոխութեան զավակին—բուն կերպով ասող, «հայրենիքի» փրկիչը դառնալու ծարավի, անխելք ու անխոհեմ, այդ հարուստ աշխարհաճորտներն այն գաղափարով ներշնչվեց, վորը նրան հանդուգն համարձակ էր թվում—ամբողջ Մոսկովան այրել, սակայն վոչ մի կերպ նրան թշնամու չզիջէր: Դեռեւս ոգոստոսի 12-ին նա մասնավոր նամակով գրել էր զինեւալ բազրատիրոնին. «Մոսկովայի ժողովուրդը կմահանա մոսկովյան պարիսպների մոտ, իսկ յետեւ անտված չողնի, քաղաքը մոխիր կգարձնի»^{*)}: Մոսկովայի այրման նախադիմը նա չէր թողնում ընդհուպ մինչեւ մոմենտը, յերբ Նապոլեոնն արդեն մոտեցավ Դարաբամիրովին: Ընդունա, չնայած թվացող ամբողջ կանխատեսութեանը, այդ մոմենտը Մոսկովայի տիրակալին հանկարծակի բերեց, սակայն վորոշ բան նա կարողացավ կատարել նրա համար, վորպէսզի աջակցի Մոսկովայի այրելուն:

Այդպէս, Ռաստոպչինը կարգադրեց բոլոր հանգցնող հրդեհախողովակները գումակային սպասարկների եւ լծակառքերի հետ քաղաքից դուրս հանել, վորով Ֆրանսիացիներին զրկել հրդեհները մարելու հնարավորութեանից: Նրա հրամանի համաձայն,

^{*)} «Ֆ. Վ. Ռաստոպչինի նամակները», «Ռուսակն արխիվ» հանդես, 1899 թ., դերք 8-րդ:

Թշնամու Մոսկովա մահելու նախորդակին կարանավորման հանազան տեղերից ազատ էյին արձակված քրեական կարանավորները, սակայն Մոսկովայից դուրս չէյին հանված, ջարդված էյին սպիրտով ու ողիով լի տակառներ, այրված էյին Մոսկովա գետի վրա, Սեմյոնովի մենաստանի եւ «Կրասնիյ խով» դարի մոտ հացահատիկով ու անասունների կերով բարձված՝ կոմսարիատի բեռնահավակները: Ըստ յերեւոյթին նրա կարգադրութեան համաձայն, չնայած վոստիկանութեան մայրաքաղաքից հեռանալուն, այնուամենայնիւ նրանում մնացել էյին վոստիկանական ծառայողներից մի քանի հոգի եւ, թշնամու դատական հանձնաժողովի վկայութեան համաձայն, գործոն մասնակցութեան էյին ունեցել հրկիզումների մեջ: Ռաստոպչինի այս եւ ուրիշ կարգադրութեանները ցույց են տալիս, վոր նրան կարելի չէ մասնակից համարել Մոսկովայի ընդհանուր հրդեհի մեջ, թեպէս հետագայում հենց ինքը ջերմորեն հերքում էր իր մասնակցութեանը նրանում:

Պատերազմից 10 տարի հետո «Ծշմարտութեան Մոսկովայի հրդեհի մասին» վերնագրով նա մի բրոշյուր հրատարակեց, վորի մեջ նա բացարձակապէս յերես ե գարձնում «սույն գործի խայտառակութեանից՝ ռուսների ու Յեւրոպայի աչքում» ե Մոսկովայի ավերածութեան պատասխանատվութեանը Նապոլեոնի վրայ յի փոխադրում:

Մեր առջեւ տարրերնակ փաստ ե կանգնած. պարծենկոտ մարդը զայրութով իր ձեռքից զեն ե նետում «հերոսական ջանք» ե թշնամու միջավայրում ե վորոնում հրդեհի հանցավորներին: Յետեւ իրոք հայրենասիրական լեզունդն իրենց քաղաքն այրելու մասին—Մոսկովացիների մեծ վճռականութեանն իրականութեան ե յեղել, ապա ինչի՞ համար Ռաստոպչինը պետք ե հրաժարվեր այդպիսի հերոսական վարմունքի մեջ կազմակերպիչը լինելու պատվից:

5

Բնակիչների կողմից լքված Մոսկովայում հրդեհների առաջացման համար կարիք չկար Ռաստոպչինի գրգռումներին: Առանց զրան ել քաղաքը, իր մշտական բնակիչներից զրկված, իշխանութեան բոլոր օրգաններից զրկված, կարող էր այրվել:

Յեթե մոսկովացիները տեղում մնային, հրկիզման ամեն տե- սակի փորձեր չեյին կարողանալ լուրջ հետեանքներ ունենալ, կարող եյին վոչնչանալ առանձին տներ, տների առանձին խում- բեր, մինչև անգամ, կարող ե պատահել, քաղաքի մի քանի թա- ղամասերը, սակայն վոչ նրա չորս հինգերորդական մասը: Նա- պոլեոնյան զորքի՝ կարգապահութեան վարժված զորամասերի բնակելի քաղաք մտնելը նույնպես վորեք կատասարոֆա չեր սպառնում: Դժբախտութեանը նրանումն է, վոր զորքերը մտան գրեթե դատարկ Մոսկվան: Անտկրնկալ հայտնվելով լքված հարուստ քաղաքում՝ նապոլեոնյան զինվորներն ու սպանները դադարե- ցին զինվորականներ լինելուց, սակայն քաղաքի բնակիչներ ել չդարձան: Ըստ Տալստոյի խոսքերի, «հենց վոր զորադնդերի մարդիկ սկսեցին դատարկ և հարուստ տները բաժանվել, դրա- նով առմիշտ վոչնչացավ զորաբանակը և առաջացան վոչ բնա- կիչներ, վոչ ել զինվորներ, այլ ինչ-վոր միջին, այսպես կոչված մարադյորներ (կողոպտիչներ): Յերբ հինգ շաբթից հետո հենց նույն այդ մարդիկ դուրս յեկան Մոսկվայից, նրանք արդեն իրենցից զորք չեյին ներկայացնում: Դա մարադյորների մի բազ- մութուն էր, վորոնցից յուրաքանչյուրն իր հետ տանում կամ տեղափոխում եր իրերի կույտ, վորոնք նրան արժեքավոր և պետքական եյին թվացել»*):

Թշնամու խստավարժ զինվորի հենց այդ արագ վերա- սերումն ու մարադյոր (կողոպտիչ) դառնալն ել յեղավ պատ- ճառներից մեկը, վորոնք առաջացրին Մոսկովյան հրդեհները: Լինելով առավերպես փայտակերտ քաղաք՝ Մոսկվան նույնիսկ առանց հրկիզման ել պետք ե վառվեր, ինչպես պետք եր բոցա- վառվեր տաշեղի մի կույտ, վորի վրա մի քանի ուղիս ընթաց- քում կրակի կայծեր տեղան: Մոսկվա մտնելու ժամանակ թըշ- նամու համարվոչ մի հիմք չկար հրկիզելու, սակայն նրա՝ կրակի վերաբերմամբ ցուցաբերած փնթխութեանը տարավ դեպի հըր- դեհների առաջացում, իսկ հանդցնելու համար վոչվոք և վոչինչ չկար:

Քաղաքում մնացած Մոսկովացիները չափադանց խղճուկ վի- ճակի մեջ եյին գտնվում: Ռուսական զորքերի գլխավոր հրամա- նատար Կուստուզովը սեպտեմբերի 4-ին ցարին տեղեկացնում եր, վոր իբր թե Մոսկվան ամբողջովին դատարկված և և «նրանում

*) «Պատերազմ և խաղաղութուն», հատոր 3-րդ, մաս 3-րդ, դուխ 26-րդ:

չի մնացել համարյա վոչ մի բնակիչ»*): Այդ, իհարկե, ճիշտ, չեր: Հիրավի դանազան պատճառներով քաղաքում մնացածները մի քանի հազար հոգի եյին, հնարավոր ե մինչև 15—20 հազար հոգի: Այստեղ կային հիվանդներ, վիրավորներ և դրանց խնա- մող անձնական կազմը, ծերերն ու մենակ մարդիկ, վորոնք չե- յին կարողացել Մոսկվայից հեռանալ, թշնամու կամայակա- նութեանը թողնված տերունի սպասակազմը:

Մոսկվայի փողոցներում հայտնվեցին բանտերից արձակված «կալոգնիկներ» (չղթակապ կալանավորներ), առանց ապաստարա- նի և առանց ապրուստի մեջոցներ, փողոցներում թափառում եյին կամ թաղնվում եյին իրենց անկյուններում մանր առևտրականներն ու արհեստավորները, վորոնք ինչ-վոր պատճառով չեյին կարո- ղացել ընդհանուր փախուստի որերին Մոսկվայից մեկնել, և դրան- ցից նրանք, ովքեր դեպի դավառ ուղևորվելու տեղ չուներին: Բոլոր սրանք և սրանց նման խմբերի մարդիկ, վորոնք միմյանց միջև վոչնչով չեյին միավորված, ցանուցիր եյին յեղած հակայական տերիտորիայով մեկ և ապրում եյին թշնամու հա- նդեպ անի մթնոլորտում, փոխադարձ անվստահութեան մթնոլոր- տում, լիակատար անգիտութեան մեջ ամենամոտիկ դավիքի վե- րաբերմամբ, անորոշութեան մեջ իրենց մերձավորների ճակատա- զրի մասին, և այլն:

Մոսկվայի լիակատար անկարգութեան պայմաններում, 1812 թվականի պատերազմի մի ժամանակակից արտահայ- տութեան համաձայն, ալիքի դժվարին եր անփլաս մնալ, քան թե աչրվել**):

Յեվ Մոսկվան աչրվեց գրավման առաջին իսկ որերին:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր Մոսկվայի վիթխարի հրդեհը վոչ մի կերպ չի կարելի նրա բնակիչների նախամտած- ված ինքնազոհաբերմանը վերադրել: Այդ հրդեհն առաջնակարգ նշանակութուն ունեցավ նվաճողների դեմ Ռուսաստանի պաշտ- պանողական կռիվում, սակայն նա որչեպիտով հաջադանքներով եր պայմանավորված: Իրենք՝ այդ մոմենտը վերապրած մոսկ- վացիներն իրենց համարում եյին անորինակ կատասարոֆայի զոհեր և վոչ թե հայրենասիրական սխրագործութեան հերոսներ:

*) Պ. Շչուկին, «1812 թվականի հայրենասիրական պատերազմին վերա- բերող, վավերաթղթեր», մաս 1-ին, եջ 95 № 1907.

**) «Դ. Ն. Սվեբեվի հիշատակարան», հատոր 1-ին, եջ 446

3249-84

ՀՀ Ազգային գրադարան



NL0415214

ԳԻՆԸ 50 Կ.